ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Ք. Եղեգնաձոր Շահումյան 1

հեռ 281-2-20-20
ֆաքս 281-2-20-20

,, 08 ,,մայիս ,, 2014թ.

<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-1/2> ծածկագրով
գնման ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին

<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-1/2 ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում Եղեգնաձորի քաղաքապետարանի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու <Գնումների աջակցման կենտրոն> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրի համաձայն, կից ներկայացվող պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածում նշված ապրանքները:

Տեղեկացնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկները կարող եք ներկայացնել ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, Եղեգնաձորի քաղաքապետարան հասցեով, մինչև 2014թ. Մայիսի 20-ը, ժամը.10.00ը: Մասնակցի կողմից հայտերի ներկայացումը պարտադիր չե:

Հայտերը կբացվեն Եղեգնաձորի քաղաքապետարանի վարչական շենքում, ք. Եղեգնաձոր, Շահումյան 1 հասցեում 2014թ. Մայիսի 20-ին ժամը 10.00-ին:

Հայտը ներառում է գնային առաջարկը և մասնակցի գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել <ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-1/2> ծածկագրով ընթացակարգի փոփոխված հրավերով սահմանված կարգով /հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում <Շրջանակային համաձայնագրեր բաժնի <հրավերում կատարված փոփոխություններ> ենթաբաժնում>/:

Ծածկագրի ընթացակարգն է < ՎՁՄ-ԵՔ-ՇՀԾՁԲ -1/2>

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Եղեգնաձորի քաղաքապետարան

Սարքերի և սարքավորումների սպասարկման տեխնիկական բնութագիր

ՎՁՄ-ԵՔ-ՇՀԾՁԲ -1/2 պայմանագրի

		Չափի	
հ/հ	Ծառայության անվանումը	միավոր	տեխնիկական բնութագիր
1	Xerox Phaser 3160B լիցքավորում	հատ	Չափածրված, 3010 տոներ
2	Xerox Phaser 3160B թմբուկի փոխարինում	հատ	թմբուկ, 3010-ի համար
3	HP Laser Jet P1005 լիցքավորում	հատ	1200 -ի տոներ, չափածրված
4	XEROX Workcentre 5016 լիցքավորում	հատ	քարտրիջի լիցքավորում XEROX Workcenter 5016/5020
5	Lexmark E 250D լիցքավորում	հատ	տոներ

* Բոլոր չափաբաժինները պետք է համապատասխանեն ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին

* Սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունը պետք է կատարվի Վայոց Ձորի մարզ, Եղեգնաձոր քաղաքում

ԳՆՈՐԴ

Եղեգնաձորի քաղաքապետարան

ԳԴ Վայոց Ձորի Ս³ñ½, ù Եղեգնաձոր

Շահումյան 1

ՀՎՀՀ 08903277

ՀՀ 900352131024

Քաղաքապետ Դ. Հարությունյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 3
<< >> ,,,,,,,,,,, 2014թ.
ՎՀՄ-ԵՔ-ՇՀԾՁԲ -1/2 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը*	Բյուջե տային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Եղեգնաձորի քաղաքապետարանի 2014թվականի բյուջեից, ընդ որում՝												Ընդամենը
		I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոս տոս	սեպտեմբեր	հոկտեմ բեր	նոյեմ բեր	դեկտեմ բեր	
1	2	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Սարքերի և սարքավորումնե րի սպասարկում							50%			100%			0%	100%

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

Եղեգնաձորի քաղաքապետարան

Վայոց Ձոր, ք. Եղեգնաձոր
Շահումյան 1
ՀՎՀՀ 08903277
Հ/Հ 900352131024

Քաղաքապետ Դ. Հարությունյան
/ստորագրություն/

/ստորագրություն/
Կ.Տ

<<Սարքերի և սարքավորումների սպասարկում>> ծառայությունների մատուցման պայմ,անագիր

ՎՁՄ-ԵՔ-ՇՀԾՁԲ - 1/2

ք. Եղեգնաձոր << >> 2014թ.

Եղեգնաձորի քաղաքապետարանը, ի դեմս քաղաքապետ Դ. Հարությունյանի, որը գործում է քաղաքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից և "....."-ը, ի դեմս տնօրեն .....-ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին

1 Պայմանագրի առարկան

Կատարողը պարտավորվում է սույն Պայմանագրով սահմանված կարգով, ձևով և ժամկետներում մատուցել սույն պայմանագրի Տեխնիկական բնութագրով նախատեսված (N 1 հավելվածով) սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայություններ (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. Ծառայության մատուցման պայմանները

2.1 Կատարողը Ծառայությունը մատուցում է Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին:

2.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն 30 աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Կատարողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատուցելու դեպքում հրաժարվել Ծառայությունից.

3.1.2 Եթե մատուցվել է անպատշաճ որակի՝ սույն Պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը, իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ծառայությունը սույն Պայմանագրին համապատասխանող որակի Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն Պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը.

3.1.3 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ծառայություն՝ սույն Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված

գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ծառայությունն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է սույն Պայմանագիրը.

3.1.4.1 Կատարողի կողմից Պայմանգիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա)մատուցվել է անպատշաճ որակի Ծառայություն, որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ)խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը.

3.2 Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն Պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայության ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

3.2.3 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.3 Կատարողն իրավունք ունի՝

3.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատուցված Ծառայությունը.

3.3.2 Պատվիրատուից պահանջել հատուցելու վնասները, եթե Կատարողը Պատվիրատուի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով մատուցել է Ծառայություն՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Պատվիրատուից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատուցված Ծառայության համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատուցել Ծառայությունը: Վաղաժամկետ մատուցված և Պատվիրատուի կողմից ընդունված Ծառայությունը հաշվարկվում է հաջորդ փուլում մատուցման ենթակա Ծառայության մասի հաշվին.

3.4 Կատարողը պարտավոր է՝

3.4.1 Պատվիրատուին մատուցել Ծառայությունը՝ սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

3.4.3 Սույն պայմանագրի 3.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

3.4.4 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տուգանքը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս վնասները:

3.4.7 Սույն Պայմանագրի գործողության ժամանակահատվածի ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսվելու դեպքում դրա մասին անհապաղ գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. Ծառայության գինը և վճարման կարգը

4.1 Սույն Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ( ) ՀՀ դրամ:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 4 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում: Եթե մատուցված Ծառայության համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ծառայության որակը

Կատարողը երաշխավորում է մատուցված Ծառայության որակի համապատասխանությունը պետական չափանիշներին:

6. Ծառայության հանձնման և ընդունման կարգը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Կատարողը պատասխանատվություն է կրում մատուցված Ծառայության որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատուցման ժամկետների պահպանման համար:

7.2 Կատարողի կողմից սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն Պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանցվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև գնման պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ

կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

9.3 Սույն Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր Պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Պայմանագրի անբաժանելի մասը:Սույն Պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

2) սույն Պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները որոշվում են և դրանց փոփոխությունը գնահատվում է գնանշման հարցումների և վիճակագրական տվյալների համադրման միջոցով:

Սույն Պայմանագրում չի կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են մատուցվող Ծառայության ծավալների կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.4 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են օրենսդրությամբ սահմանված կարգով:

9.5 Սույն Պայմանագիրը կազմված է, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Պայմանագրի N 1, N 2, N3, N4 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

9.6 Սույն Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.7 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Եղեգնաձորի քաղաքապետարան	
ք Եղեգնաձոր, Շահուման 1	
ՀՎՀՀ 08903277	
Հ/Հ 900352131024	
Քաղաքապետ Գ. Հարությունյան	
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<__>><<_____>> 20 14 թ.

Պայմանագրի անվանումը՝ Սարքերի և սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայությունների պայմանագիր:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<__ >><<_____>> 2014 թ.

(Համաձայնագրի կնքման ամսաթիվը)

Պայմանագրի համարը՝ _____

(Համաձայնագրի համարը)_____

Գնորդն, ի դեմս_____ և Մատակարարն՝ ի դեմս_____, հիմք ընդունելով, որ պայմանագրով (Համաձայնագրով) նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները (այսուհետև՝ Ծառայություն) համապատասխանում են պայմանագրով (Համաձայնագրով) ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի (Համաձայնագրի) շրջանակներում Վաճառողը <<__ >><<_____>> 2014 թ-ից <<__>> <<_____>> 2014 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ ծառայությունները

Ծառայության համառոտ նկարագիրը	Ծառայության քանակական ցուցանիշները	Ծառայության ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ Ծառայությունների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությանը մատուցման

_____

(ստորագրություն) ազգանուն

Ծառայությանը ընդունեց

_____

(ստորագրություն) ազգանուն

Հավելված 5
<<ԳԱԿ-ՇՀԾՁԲ -1/2>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի
N <<ՎՁՄ-ԵՔ-ՇՀԾՁԲ -1/2>> ծածկագրով
Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ

ԴԻՄՈՒՄ

_____ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
Եղեգնաձորի քաղաքապետարանի կողմից <<ՎՁՄ-ԵՔ-ՇՀԾՁԲ -1/2>> ծածկագրով հայտարարված ընթացակարգի
Հայտարարված ընթացակարգի _____չափաբաժնի
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջների համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
հիմնադրի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝
1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
չունի գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____ :
Մասնակցի էլեկտրոնային փոփստի հասցե

_____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

<<_____>>_____ 2014 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 5.1

<<ԳԱԿ- ՇՀԾՁԲ -1/2>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի

N <<ՎՁՄ-ԵՔ-ՇՀԾՁԲ -1/2>> ծածկագրով
Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված << ՎՁՄ-ԵՔ-ՇՀԾՁԲ -1/2>> ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,
_____-ն

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների՝

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			

**3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*
***Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

_____ _____

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

<<_____>>_____2014 թ.

(ամսաթիվը, ամիսը)